

ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ

ուղարկոյ համար	
Տարեկան	10 Ֆր.
Վեցամսեայ	5 »
Իրատեսակի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Անկերիկայի համար	
Տարեկան	2.50 Ֆր.
Վեցամսեայ	1.25 »

ՊԱՆԹԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Իրականացնելու տպարանը
 երեսին համար 40 աստիճան
 է. իսկ վերջին երեսին համար
 20 աստիճան է. երեսին
 առ ի անգլաներու համար
 20 Օլո գեղջ կըլլայ:

ESTELLT
 10.99
 8-9 V



Նախկին և նորապիսի
 Խնամարարական հասցիքին

Редакция на вестникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ
 ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԳԹԻ ԵՒ ՇԱԲԱԾ ՕՐԵՐԸ

Գրութիւնք ևս չեն տուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

**ԱՄԵՆ ՄԵԿԻՆ
 ԻՐ ԱՐԺԵՔՈՎ**

Մեր մէջ կան մարդիկ որոնք
 հայ ժողովրդից պահանջում են
 որ և է հասարակական գործիչի
 յարգել այնչափ, որչափ իրենք
 են յարգում: Պէտք է չի մտա-
 նալ որ այդ պահանջիս մար-
 դիկը բոլորն էլ անկեղծ չեն,
 այլ իրենց պահանջները հրա-
 պարակ են նետում միայն ջուրը
 պղտորելու համար:

Այդպիսի անհեթեթ պահանջ-
 ներ արած միմոյցին այդ «պո-
 շտա» գրաւները մուռնում են որ
 անկեղծ, անձուռէր, կարող և
 մարտուր հասարակական գործիչ-
 ները արդէն իրենց գործերով
 ձեռք են բերել ժողովրդի յար-
 գանքը և գրան արժանանալու
 համար՝ մասնաւոր պրոպագան-
 տայի պէտքը չըկայ: Իսկ այն
 գործիչները որոնք արհամարվել
 են ժողովրդի աչնի և հաս-
 կացող մասից: միշտ էլ արհա-
 մարված են մնացել, չը նայած
 որ զանազան մեկլաւիկներ կամ
 կեղծ հայրենասէրներ՝ այդ ար-
 համարաւածներ համար, ինչ ինչ
 հաշիւներէց գրողված, ներքող-
 ներ են կարգուցել:

Օրինակ, Բարեկենդանի և Մու-
 րաւորներին յարգելու համար,
 ներքողական քարոզների պէտքը
 չըկայ: Իրանք իրանց էութեամբ
 և շատ կարճատեւ գործունէու-
 թեամբ, այնքան մեծ ազդեցու-
 թիւն են գործել հայ ժողովրդի
 լաւ մասի վրա, որ բաւական է
 միայն այդ անունները յիշես և
 ահա՛ հայ ժողովրդի սիրտը կակտի
 թնդալ հպարտ հպարտ...:

Իրանք շատ կարճատեւ գոր-
 ծունէութիւն են ունեցել. բայց
 և այնպէս տիրապետել են հա-
 յութեան մարտուր և զգայուն
 սրտերը: Իսկ կան գործիչներ,
 որոնք տասնեակ տարիներով հա-
 սարակական գործիչ են եղել.
 նոյնիսկ յեղափոխական ասպա-
 րէզի վրա, բայց և այնպէս, ոչ
 մի ազդեցութիւն չեն գործել

հայ հասարակութեան վրա և
 չեն արժանացել նրա պաշտա-
 մունքին:

Հայ ժողովուրդը՝ կամայ ակա-
 մայ, մեծ ակնածութեամբ խո-
 նարվում է Բարեկենդանի և Մու-
 րաւորների առջև, որովհետեւ
 նրանք իր գարեւոր սարկու-
 թեան մարմնացած բողոքն են.
 և բաւական է միայն այդպիսի
 անունները արտասանել և ահա
 նա պարտաւոր է իր խորին յար-
 գանքը՝ դնել այդ հոգեւոր
 սուրբի տակ:

Բայց ժողովուրդը կիսատ մի-
 աստ, կասկածելի գործիչներին
 նոյն չափով յարգել չէ կարող,
 բարոյական արժէքի տարբերու-
 թիւն կայ:

Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող
 լինել. եթէ մեր ժողովուրդը չը
 սովորի իր գործիչների մէջ տար-
 բերութիւն դնել նրանց տուած
 օգուտների և բարոյական ար-
 ժանիքների համեմատ, այն ժա-
 մանակ մեր գլխին եկած ազգա-
 յին աղէտները փոխանակ հե-
 աղհնեալ պակասելու՝ պէտք է
 կրկնապատկուէին, բազմապատ-
 կուէին և մեր կորուստը անխու-
 սափելի պէտք է դառնար:

Մենք փոխանակ վշտանալու,
 ուրախանում ենք որ ժողովուր-
 դը սովորել է զատել և ամէն
 մէկին իր արժէքով գնահատել:

ՈՐԸ ԱՌԱՋ

Սոյն օրինակ հարցեր երկար
 վիճարանելիք նիւթեր են ու կը
 շարունակուին այնպէս՝ երբ մա-
 մուլը օգնութեան հասած չէ:
 Մամուլի միջոցաւ ամենազգուար
 ու կենտոն հարցերն իսկ խիստ
 զիրու թեամբ և ճշմարիտ կեր-
 պով կը լուծուին: Տեղս գարու-
 ցի և եկեղեցւոյ խնդիրներ կան
 որոնք օրուան նիւթեր դարձել
 են հայ գաղութին մէջ. նոյն
 իսկ ազատ լսարանին մէջ կը
 ծեծուին անդադար. բայց զբ-
 բաղդարար որոշ եզրակացու-

թեան մը չեն յանդիր. ուստի
 յարմար գտնեցի խնդրել «Շար-
 ժում» ի խմբագրութեանն որ բա-
 րեհաճի իր թերթի սիւնակնե-
 րէն միայն մէջ զեանդել երկ-
 տոյս՝ լուծում մը գտնելու հա-
 մար:

Արդ՝ խօսքս կուզեմ աչնիւ
 ընթերցողներուն. ո՞րք առաջ
 պէտք է, «Եկեղեցին թէ գարու-
 ցը»: Հարցս ընելէ ետեւ կուզեմ
 ունեցած կարծիքս եւս յայտնել:

Գրեթէ երկու ու կէս տարի-
 ներէ ի վեր է հոս եկեղեցի
 մը կառուցանելու զրոյցը կը
 շրջի. անոր համար կազմուած
 յանձնախումբը իր աշխատու-
 թեամբ հաշիւ վեց ամիս առաջ
 եկեղեցւոյ հողը գնեց (600 տո-
 լար). հիմակ ալ շէնքը պիտի
 բարձրանայ այն ալ առ նուազն
 3—4000 տոլարի կարօտութիւն
 ունի: Եկեղեցին պիտի շինուի...
 բայց մինչեւ ե՞րբ...:

Հայ երկեսեւ մանուկները ամե-
 րիկեան վարժարանները կը յա-
 ճախեն, իրենց ուսումը առնե-
 լու, կը թուելու ու հոն մնալու
 համար: Հոն չկայ հայ լեզու,
 չկայ պատմութիւն և ոչ հայու-
 թեան վրայ գէթ փոքրիկ գաղա-
 փար առաջ գրքով մը: Կը սոր-
 վին միմիայն Անգլիերէն. անոնց
 մատուց սրտերուն մէջ անջինջ
 կը տպուի օտար լեզուն, և կը
 գաւնայ իրենց մայրենի լեզուն
 և երկիրը իրենց հայրենիքը.
 ալ հայ չեն անոնք այլ՝ օտար-
 ներ—Ամերիկացիներ...:

Հայութեանն պէտք է քա-
 շուելու ախտէն բոնուիլ սկսած
 են մի քանիները. անոնք չեն
 սիրեր հայ լեզուն, կը խորշին
 անկէ. չեն սիրեր Հայութիւնը,
 կասեն անիկայ. միայն իրենց
 կեղծ շրթունքները խաչագոյու-
 թեան գրգռումով կը շարժին, ևս
 Հայ եմ ըսելու:

Ո՞վ կը խաբեն... այդ կը
 խաբուին կարգ մը անփորձ ու
 ոչխարամիտներ, զոհ երթալով
 խաբուպատիր շլացուցիչ համոզ-
 մանց: Երեսակայեցէք աչնիւ
 ընթերցողք, ի՞նչ կը լինին ա-
 նոնց զաւակները...:

Կան դասակարգ մըն ալ, ու-

րոնք թէեւ հայութեան ու լեզ-
 ուին սիրահարներն են, սակայն
 ստիպեալ գարոցի պակասութե-
 նէն օտար վարժարաններ կը
 շրկեն իրենց զաւակները, ուր
 ոչ կամ կանուխ կը ձուլուին օ-
 տար կաղապարներու մէջ: Օտար
 սրտերներու անյագ ստամոքս-
 ները շուտով կը մարսեն զանոնք.
 արեմն օրու կը շինուի եկեղե-
 ցին:

Ահա այս բողոքի համար վեր-
 ջերս աչնուցս հայ գաղութը եր-
 կուքի բաժնուեր են. մէկը եկե-
 ղեցի կը բացադանչէ, միւսը
 գարոցի պէտքը աւելի զգալի
 գտնելով գարոց, գարոց կը
 սրտայ: Վերջինը երիտասար-
 գութեան մէկ մասն է. քիչ շատ
 զարգացեալ. իսկ առաջինը կը
 կաղմին խաչագոյներու վոհմակ
 մը և կարգ մը եկեղեցւոյ կա-
 պերտները կտրտուի խոշոր խաչ
 հանողներ: Յաւալին այն է որ
 քանի մը անփորձ երիտասարդ-
 ներ ալ անմտաբար գործիք դար-
 ձեր են անոնց. կը մեղքնա՞մ
 վերջիններուն:

Կարմիր Սուլթանը բազմադար-
 եան ծառը ճղակուեր կընէ, իսկ
 գիւմակուոր խաչագոյները աւելի
 մեծ կտորածը կուտան—արմատը
 կը կտրտեն:

Ուստի առաջ պէտք է գարոցը
 հիմնել որպէսզի հայ մանուկները
 հոն նախ իրենց մայրենի լեզուն
 ու պատմութիւնը սովորին, գիտ-
 նան թէ ինչ ու համար հայ են և
 թէ ի՞նչ վսեմ ու նուիրական
 պարտականութիւն ունին առ հայ
 ազգը, և այլն, և այլն: Ահա այն
 ատեն հայ են անոնք ու հայ ե-
 կեղեցւոյ արժանի զաւակներ:

Եկեղեցին կը շինուի ժողովուր-
 դին համար. երբ ժողովուրդ չու-
 նինք, ի՞նչ ընենք եկեղեցին.
 եթէ մի քանի անհասներու հա-
 մար՝ միայն կը շինուի, որոնք
 Աստուծոյ ներկայութիւնը միայն
 եկեղեցւոյն մէջ կը հաւատան, հոն
 պիտի մանեն որ կարող ըլլան
 խօսիլ ու բանակցել անոր հետ.
 վա՛յ հաւատացեալոց...:

Վերջապէս իմ անկեղծ համո-
 զումս է առաջ գարոց վերջը ե-
 կեղեցի:

Ծիղ ՌԵՏՈՒՆԻ
 Ուէսթ-Հոփքըն, 6 Հոկտ.
 —)(—)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի ԶՄԻՐ, 7 Հոկտեմբեր

Ընթերցողք կը յիշեն անշուշտ անցեալ տարի 12 տարեկան մատաղ որբուհիներուն պատիւը բռնաբարող Ծէրքէին, որը ի շնորհս տեղւոյս անզգայ ու ամէն անպատուութեանց հանդուրժող ազգայնոց՝ ազատ համարձակ քնաց Ամերիկայ եւ իբր վերջին անարգանք մըն ալ ազգային իշխանութեանց անհոգութեան ինքզինքը արդարացնելով աւելի մեծ պաշտօնի կոչուեցաւ: Այսօր սակայն մեր դպրոցներուն մէջ հայ Ծէրքէներ զորք կուգան. որքան տարօրինակ իսկապէս: Հայ տարրին մէջ այդպիսի դէպքեր հազիւ տեսնուած է. եւ այսօր Իզմիրի մէջ, այն ալ դասատուի մը կողմէ այդ կարգի հրեշտային արարքի մը հանդիսատես կը լինինք. ահա այդ դէպքը:—Պ. Պալապանեան 38 տարեկան ամուսնացած եւ զաւակաց տէր, դասատուն մանկապարտէզի վարժուհիներէն միոյն ապօրինի առաջարկութիւն կընէ եւ անյաջողութեան պարագայէն խնդիրը կը տարածայնուի: Դէպքը իր տեսակին մէջ աւելի յուզումալից ու գայթակղեցուցիչ է հանդէպ այս ճիւղին. որովհետեւ ընողը վարժապետ է, քիչ մը բռնագետ եւ պատուաւոր ճանչցում է իր ծանօթներէ: Բայց այդ յուզումն ու գայթակղութիւնը կրնար բանաւոր ըլլալ ուրիշ տեղերու հայութեան համար. Իզմիրցիին այլ զգացում, այլ տրամաբանութիւն ունի... Ը՛հ ամէն մարդ իր ըրածին թող զղջայ... ահա Իզմիրցիին այլանդակ ու հակամարդկային տրամաբանութիւնը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԶԿԱՅ ԺԱՅՈՒ

(Շար. 169րդ քիւնն եւ վերջ)

Եւ ինչ կայ զարմանալու որ սարսփեցինք. մուկ գիշեր շուրջներս, աւերակ, հեռուն ամային սեւ դաշտ. տակներս անդունդի պէս ձոր, խշշացող ջուր, խորհրդաւոր շուկ: Մենք երգել չը կարողացանք. երեքս միասին կծկուեցինք ժայռի գլխին եւ սկսեցինք մտածել մեր անխոհմտութեան վրա, որ համաձայնեցինք այդպիսի մի վտանգաւոր քայլ անել մուկ ժամանակ:

Մեզինց ամենաբոտոր եւ զարծախօսը սկսեց կատակներ անել. ջանաց կրկին մեզ զուարթացնել, բայց չը յաջողեց: Մեր մտքերի մէջ վերակենդանացել էին մեր անբուժ լսած հին առասպելները զանազան ոգիների մասին, որոնք ապրում են աւերակներում, ջրերի ափին, ձորերի մէջ: Ամէն մէկս առանձին առանձին մտածում էինք որ չուտով կերեւայ այդ ոգիներէն մէկն ու մէկը. —եւ մեզ կը զրոյթէ զէպի անդունդ—կամ ով գիտէ թէ ինչեր կան ինչ...:

Այդ տանջող, սարսփահար մտքերի մէջ, ժայռի գլխին կծկված, առանց ձայն ու ձայնուն հանելու ջանքերս երկար մնացինք. մէկ էլ յանկարծ մութը փարատվեց, կաթնագոյն լոյս տարածվեց մեր շուրջը—երեւաց լուսինը: Եւ այդ բա-

Սուրհանդակի մէջ կարգացիք անշուշտ, որ այս տեսակ դէպք մըն ալ Մաղնիսայի միսիօնարական դպրոցին մէջ պատահեց է. դասատու պատուելիին: Կողմանէ հայ 12 տարեկան աղջկայ մը վրայ կը պատահի. եւ հակառակ տեղւոյս միսիօնար Պ. Սքոթընի գիտութեան պատուելին անպատիվ կը շարունակէ իր պաշտօնը:

Ըսի որ հոս այդպիսի արարքները իբր ազատական դէպքեր կիմացուին եւ կը մարին իրենց տեղը. առանց որոշ փոփոխութիւն մը առաջացնելու. որովհետեւ տեղացիներուն մէջ սկսած ամենաբարձր դասակարգէն մինչեւ ստորին խաւերը, հազուագիւտ են անոնք, որոնք վարակուած չը լինին ամենայրոյի բարք ու վարքերէ եւ ապականութեան տիղմին մէջ չը լողան: Երբ արդեօք մաքուր հոսանք մը պիտի սկսի այս կարեւոր կեդրոնին շուրջը եւ գէթ մասամբ աւել, մաքրէ այս աղբը որ կապտոնայ հայութեան ուրիշ մասերն ալ ապականելու:

Անցեալ թղթակցութեամբս կերպով մը պարզած էի շարք մը ազգային գործեր, որոնք լաւ ապաւորութեան տակ գրուած չէին. ցաւ է որ այսքան յառաջ գացած քաղաքի մը հայութեան մասին հարկադրուած պիտի լինինք միշտ սխուր դէպքեր պատմելու Շարժումի ընթերցողաց: Երէկ Իզմիրցիին զգացումը, ազգային գոհողութեան ոգին պարզեցինք. ուր տեսնուեցաւ որ սոքա շատ ետ մնացած են ազգային զոհաբերութեան զգացումէն. եւ ոչ ազգասիրական արտոգոյն կուգեն հրաժարել եւ ոչ այդ փառքին արժանանալու համար իրական զոհողութիւն մը յանձն

ւական էր: Մեր աչքերը ռեզմոլ խաւարը անհետացաւ. ամէն բան լուսաւորվեց եւ մենք տեսանք ամէն ինչ պարզ կերպով: Անյայտ, ծածկված, բան չը կար. մենք ժայռի գլխին էինք: Մեր մի կողմը աւերակ քաղաքը մի հատ կանգուն սպիտակ բնակարանով, ուր պառկած հանգիստ ննջում էին մեր ընկերները. ձորի մէջ արծաթափայլ Ախորհանը—մեզնից քիչ վար, ժայռի կրծքին, նեղլիկ ուղղուն շաւիղը:

Մեր ուրախութեանը չափ չկար. ժայռից իջնելու ճամբայ կար եւ անշուշտ այդ այն ճանապարհն էր, որ տանում էր զէպի քաղաք. գոչեց շատ հեռացնելով, պտոյտներ անելով, բայց եւ այնպէս ժայռից զլորվելու վտանգից մեզ ազատում էր:

Մենք կրկին զբարթացանք, ինքզինքնիստ գտանք եւ առանց ժամանակ կորցնելու՝ սկսեցինք ժայռից իջնել: Մեր ճամբորդութիւնը տեսցն մի ժամի չափ, որովհետեւ շատ անգամ մենք ուզուեցինք կորցնում էինք. այնատու էինք միշտ Ախորհանի ափով գնալ, երբեմն եղեգներ ի մէջ էինք ընկնում: Վերջապէս մտանք աւերակների մէջ—երեւաց եւ մեր իջնանք—բայց քունքս արդէն փախել էր. մի անգամ վտանգից ազատված, լուսնի լուսով էլ հրապուրված էլ չուզեցինք քնանալ. եւ սկսեցինք չըջագայլ, դիտել աւերակները:

Պատում էինք մենք. հայրենի երկրի աւերակների մէջ, լուսնի լուսով՝ հասաչելով, յուզվելով, վրդովվելով՝ բախտի, նախախնա-

կանեն: Իսկ այսօր, երկու խօսքով Շարժումի ընթերցողաց կը ներկայացնեմ այս տեղի նոյնիսկ գրագէտ կոչուածներու կարծիքը հանդէպ մեր ազգային գործերու:

Նախ որ Շարժումի Պատրիարքի մասին գրածները փորացաւ կը պատճառէ ստոնց... «Ի՞նչ ինկեր են Օրմանեանին կտեւը... Ի՞նչ, ասկէ լաւը պիտի գտնէին. ո՞վ, Իզմիրեանը կուզենէր, որ իր անխելութեամբը, անքաղաքագիտութեամբը ու անտեղի ընթացքովը այնքան աղէտներու... պատճառ եղաւ»:

Աստից կարծիքով յեղափոխականաց եւ Իզմիրեանին երեսէն է որ ազգը մինչեւ այսօր կը տուժէ:

Այլեւս ընթերցողին կը թողում գտնել. այդ խելապատակ իմաստակներու միոյն ճիշդ իր բռնեքը գետեղելէս վերջ. սա ալ ըսելու եմ. որ աստից կուսակցութիւն կամ յեղափոխութիւն բռնեքը բերան առնող ազգային զաւաճան կը ճանչնան. մէկ խօսքով կուզեն մեզի՝ զաւտացիներուս խուլ կերպով հասկցնել թէ՛ եթէ քուրան ու թուրքը կուգայ մեր քոյրը տանիլ պղծելու, մեր մայրն ալ սանք մեր ձեռքովը... Եթէ մեր վզին կը զարնեն՝ ձոնք որ հաճոյքնին ալ լրացնեն... որպէս զի չըլլայ թէ բարկանան եւ ընդհանուր կոտորած ստաջ բերին, որով մտածելով անշուշտ թէ, Իզմիրն ալ նոյն շարքին մէջ կրնայ մտնել այս անգամ...:

Արդեօք արտասահմանի մէջ կարգ մը զրագէտ հրապարակագիր կոչուած իմաստակ, մութին մէջ սլքատացող սեւ հոգիներու քարոն ալ նոյնը չէ, որոնք սրբան դատապարտելի ըլլան. ըստ իս, աւելի դատապարտելիները անոնք են որ զեռ իրենց մէջտեղ

մութեան, մարդկութեան եւ մեր նախնեաց դէմ: Հայակապ կցկատուր պատմութիւնը իր բոլոր ելեւէջներով վերակենդանում էր մեր յիշողութեանը մէջ. պատմական ազգակործան ու զաւաճան հայ դէմքերը մեր երեւակայութեան մէջ աւելի սեւանալով, աւելի յաղտոտվելով յարութիւն էին անուամ մեր հոգու եւ մաքի աչքերի առջեւ. ու մենք, բարկութեանից զոտում, ստիք ցաւից կարգաւորում էինք մեզ: Երբեք մեր արեւակից զաւաճանների գլխին եւ սպառնալիքներ տալիս մեր ազգի անցեալ եւ ներկայ թշնամիներին...:

Լսել որեւէ մեծ շին քաղաքի աւերակների մասին եւ տեսնել այդ աւերակները՝ շատ արարք բաներ են. մանաւանդ, եթէ շրանք այնքան նոր, այնքան մաքուր եւ այնքան գեղեցիկ են, որ կարելի է կարծել թէ զեռ երէկ կանգուն են եղել...:

Անիի աւերակները, իրանց սիրուն շինուածքով մեզ հիացնում էին. իսկ կիսաքանդ վիճակը մեր պատանի սրտերը ըզիկ ըզիկ անում: Մեր դիմացը, աչքերիս առջեւ, մեր ոտքերի տակ՝ գտնվում էին ազատ հայութեան ամենաչնչ քաղքի դարեւոր փլատակները, որոնք նոյնքան յամառութեամբ դիմադրել են թէ բնութեան եւ թէ ժամանակի կործանարար ոգուն, որչափ ինքը, զազանների ձեռքով յօշոտված—հայ ազգը... Եւ այդ տեղ, որու բռնակալի քմահաճոյքին համեմատ, հայը չէ կարող բնակութիւն հաստատել, իր չնչով վերակենդանացնել...:

այն ինչ մի քիչ հեռու, Անիի պարիսպներից զուրս, նոյն բռնակալը

տուած են այդ ազգային ամենամեծ զաւաճաններուն ու անոնց թերթերը քաղաքներով հացերուն, իւր կը քսեն: Գիտենք, համոզուած ենք. աստից զոյութեան կարճատեւութեան մասին, բայց ինչո՞ւ որ առաջ չը լինի ինչ որ քիչ մը վերջը պիտի լինի. ինչո՞ւ ժամ առաջ չի հասկնար մեր պարզամիտ դասը իր սխալը ու սոքը իրական չազդին չի գնիր շահուն ու պատւին: Բաւ է որքան իրարմըքեցեցինք. քիչ մը մաքուր սրտով ու լուրջ մտածելով եւ իբրար հասկնանք, իբրար ճանչնանք. եւ եթէ մեզնէ ոմանք բան մըն ալ չեն կարող ընել, գոնէ պատուաւոր չեղութիւն մը պահեն:

ԼՕՐԷՆՍ, 1 Հոկտ.

Հոս ալ կը տիրէ մշուշապատ ու զազրելի բարոյական անկումը հայրուս մէջ, և եթէ չեմ սխալիր տեղւոյս գաղութին մեծամասնութիւնը կը յետադիմէ քանթէ կը յառաջդիմէ. շատ անգամ աւելի ունեցած եմ փողոցներու անկիւնները և ճաշարաններու մէջ հանդիպել զալկացած երիտասարդներու որոնք իրենք զիրենք բոլորովին կորսնցուցած ու անբարոյականութեան ճահիճին մէջ ընկնում խաղամոլութեան գիւնմոլութեան և օտարուհի ստանալու առիթը երեք չփախցուներու տեսողէն բռնուած են: Աստից կարծես թէ հայ չլինէին կամ աւելի ճիշդ է ըսել հայրենիքը չճանչնալին: Բայց մաս մը

թոյլ է աւել քրդի գիւղ հիմնել... Այս բոլոր խորհրդածութիւնները երեք պատանիներս անուամ էինք բարձրաձայն միմեանց հաղորդելով: Գոնը—հանգստանալու բաղձանքը թոյլ էր մեզնից. աւերակ տաճար, պալատ, մատուռ եւ աշտարակ թաղված լուսնի խորհրդաւոր լոյսի մէջ. սգաւոր զէմքով մեզ հրապուրում, մեզ կանչում էին. եւ մենք—այս աւերակից այն աւերակն էինք թոյնում, ոտքերս քարերին տալով, փոսերի մէջ ընկնելով...:

Ազգային դաժնեքը վրէժի արժանապատուութեան զգացմունքները իմի խոտնված՝ բորբոքել էին մեր ներքին աշխարհը եւ մենք գիւրհարի պէս, թափառում էինք աւերակների մէջ, կարծես զժառանգ հայութեան կործանան գաղտնի պատճառների բացատրութիւնը եւ նրան կրկին տալիս կանգնեցնելու միջոցները փնտրելով:

Բայց լուս էին աւերակները, համբը, քարացած... արանք մեր հարցերին պատասխան չէին տալիս—գաղտնիքները մնացին զազանիք—ամուր ծածկված հողի եւ ժամանակի թանձր քողի տակ:

Իսկ մենք ֆիզիքապէս յոգնած, բարոյապէս ճնշված, սեղմված եւ մեր սարուկի զաւակներ լինելու մէջ համոզված, ամօթապարտ, գլխիկոր գնացինք մեր իջնանք անթիւ լով այն օրը, որ մենք ծնվել էինք ստրուկ եւ գերի...:

կայ որ՝ առաջադրուած գործարան կերթան ու երեկոյին տուն կուգան յոգնած ու իրենց խցիկէն երբեք դուրս չեն ելներ սէնթ մը ծախուելու համար. կարծես հոգի տուած ըլլան. ասոնք շատ անգամ ազգային բարենպաստակ գործերէ խոյս տուած են: Մի՞թէ... ազգային խնդիրներու (այսինքն դրամ հանգանակելու) մէջ ալ սէնթի մը վրայ գործուող պէտք է: Դասակարգ մըն ալ կայ որ քիչ թէ շատ կը ճիւղայ ազգային գործերու մէջ և շղանար իր կարողութեան չափով իր լուծման նուիրել բարենպաստակ ձեռնարկներու: Վերջինս յաճախ կը կուտի իր բարոյական ուժովը այն բոլոր մարդկանց դէմ, որոնք իրենք զիրենք դէպի կարգուս կամ անդունդից անդունդ կը տանին: Ասոնց մէջ ալ կան բարոյապէս ինկածներ՝ թէեւ յեղափոխական. որոնք պարտաւոր են յեղափոխութեան կարմիր դրօշակը բարձր պահելու: Ասոնք իր թէ զարգացածներ են և որոնք ընդ միշտ քըննդատելու պէտքը կը պահեն թէ միւսները, որովհետեւ ասոնք պիտի ըլլան ժողովրդի բարոյական մակարդակը բարձրացունողները ու ժողովուրդը ասոնց պիտի հետեւի: Թերեւս ինձ հարցուի թէ ի՞նչ են ըրած. ու ես այն ատեն պիտի պատասխանեմ մասնանի ընելով ինքնակոչ յեղափոխականներու գոյնզգոյն ախպերը:

Պ. յեղափոխականներ զգուշացէք ձեր մէջ մի քայլերէն. խաւարի մէջ ձեր շուրջը կան մարդիկ և դուք երբեք մտքերնուդ անգամ չէք անցուներ թէ ձեզ գիտող են:

Ուրիշ լուր մըն ալ ունիմ հաղորդելիք. անցեալները մեր բազմախաչի հերոսները նորէն հաւաքուած են. ամէն քաղաքէ պատգամաւորներ գացած են, այս անգամ ժողովի գումարման վայրը Լոյզէն էր: Վերջապէս ըստ սովորութեան «անուշիկ» խաչը կսկսին (արդեօք ի՞նչ ազգեցութեան տակ կը գտնուին եղբրբոր իրենք զիրենք չեն ապահովուցած) գիշերը ժամը Յին ոստիկանները (պահապան հրեշտակները) կը խուզարկեն, ու եօթը հերոսներ կը ձերբակալուին: Մէկը իր ճարպիկութեամբ սենեկի պատահանէն երկու կանգուն վար կը նետուի և ազատ կը մնայ. ոչ ոք կը կարողանայ ձերբակալել. յաջորդ օրը դատը կը տեսնուի և կըտուի թէ հինգական տուար տուգանք տուած են (շատ ու շատ չնչին բան) ու արձակուած: Այժմ տեսնենք թէ լաւ դատ մը պիտի ըլլայ. իսկ թէ... ու այն ատեն ամօթ ձեզ հերոսներ (·):

ԻՊՏԵՍԱ

ՀԱՍԻՏԻՆ ՄԱՏԸ
ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՄԷՋ

Սա երկար ժամէ կծկուած կաշին և սկզբը՝ Թուրքիոյ մէջ ըրածները բաւ չի համարելով սկսած է արտասահմանի հայութիւնն ալ պարզել իր քովսէրներու ձեռքով. ասոր ապացոյցը առաջին անգամ ըլլալով Սօֆիայի պուլկարական մայրաքաղաքին մէջ տրուեցաւ որ շատ ցաւալի է:

Այս շարքի երեկոյ ոստիկան մը հայկական սրճարանը գալով, Զիւմրիդ անունով հայ մը հրաւիրեց պահականոց. գիշերը հոն անցընելով, որոշուեցաւ առանց տարաձայնութեան կիրակի առաւօտ Իլէվէնի ճամբով Ռուսանիա աքսորել, որ ըստ իս Թուրքիա աքսորել ըսել է:

Այսպէս յանկարծակի կատարուած աքսորի մը վրայ Սօֆիայի հայութիւնը յուշուած այս խնդրէն, գիշերով շատ տեղեր գիւմեց, բայց հետեւանք մը չունեցաւ:

Վերջը Սաւափօֆ և ուրիշ մի քանիներ, ներքին գործոց նախարարին խնայուցած էին որ «Զիւմրիդը հայերուն կարեւոր մէկ անդամը ըլլալուն, Սօֆիայի հայերը կրնան զինքը երաշխաւորել, եթէ երբեք յանցանք մը գործած է կամ գործէ»: Իբր թէ ասոր վրայ նախարարութիւնը կրկնակի հեռագիր մը տուեր է որ ճամբան գտնուած Զիւմրիդը, ժամանակի մը համար նօկօսօյիս մնայ, իսկ իր հետ գտնուած, այսինքն նորէն հոսկէ աքսորուած, երկու մօլլաները Ռուսանիոյ յանձնուին: Այս լուրին վրայ ժողովուրդը բաւական հանգարտեցաւ, բայց թաղականութիւնը կրկին հեռագիր զրկեց նիկօսօյիս և ուրիշ տեղեր, գործը ստուգելու համար:

Յայտնի է որ շատ բացատրութիւններ կուտան այս խնդրոյն, ոմանք կըսեն թէ՝ «հոս «Ըսլահ» անուամբ հալէպի մը կողմէ նոր հրատարակուած թրքերէն թերթին խմբագրութիւնը Զիւմրիդը ստանձնած ըլլալուն աքսորեցին» ոմանք ալ կըսեն թէ՝ «սրճարանին մէջ Համիտին մի քանի անգամներ հայհոյելուն համար» ևն. բայց իմ գաղափարով, որ քիչ թէ շատ հետազոտած եմ այս խնդիրը, կըսեմ թէ Զիւմրիդի յանցանքները մէկէ մեկին են, տարի մը առաջ գրած մէկ նամակը, հայհոյութիւնները արդէն մոռցուած չէր երբ այս թերթին ալ վրա հասաւ. և ահա տեղւոյ թրքական քովսէրը իսկոյն բողոքեց նախարարութեան, Զիւմրիդին «վակապօն» է ըսելով. իսկ գալով մօլլաներուն պատճառը մեզ անձանօթ է կըրնամ ըսել:

Անշուշտ կզգանք որ այս խնդրոյն մէջ կարեւոր երկու կէտեր

կայ նկատողութեան առնելու. նախ հինգ հոգիէ կազմուած մասնախումբի մը հաստատումը, որ այս խնդրին առաջը առնէ և թէ ուրիշ անգամներ ամէնուս պօռուկոյին տեղի չի տալու համար, իրաւունքնիս պաշտպանէ առանց մտնելու քաղաքացիական պարտականութիւննիս:

Ազգային գործերու դալով, անշուշտ գիտէք որ ժամանակէ մը ի վեր. հաստատու ու ամէնուս ճանօթ Տ. Կարապետը հոս է բերուած, շրջանկիրներու տեսարակէն իսկ վճռուած մի քանիներու միջոցաւ: Բայց այսօր Սօֆիայի լուրջ ազգայինք կը զարմանան թէ ինչպէս ստորագրուեց գտնուեր են, Տ. Կարապետին հոս հաստատուիլը փափաքով:

Շատ ուրախ պիտի ըլլայինք որ շատ պիտի գովէինք այդ քառասունները եթէ Տ. Սրիտակէս Թէսալեանէն աւելի խելացի ու վարքը բարքը տեղը քահանայ մը բերել տային:

Գալով վարժարանին, ամէն անգամ պիտի պաշտպանեմ, ու ամէն անգամ պակասութիւնները երեսուն պիտի զարնեմ:

Ամօթ չէ՞ մեղի Սօֆիայիք, վարժարաննիս հինգ տղայ կայ, և կարգին դաստառ մըն ալ չունինք:

Ո՞Վ Է ՅԱՆԳԱՆՈՐԸ

Չարչիական ասպարէզի մէջ բարոյապէս բոլորովին վատացած խանութպանը ձեռքը գրիչ կառնէ... ամբողջ հասարակութիւն մը կը թելու յաւակնոտութիւնը կուենայ. ինք որ ընկերական ամէնատարրական սկզբունքները ըմբռնելու կարողութիւնը չունի, ժողովրդի ամէն խաւերուն մէջ կը սպրդի, մըտքեր կը պղտորէ. սղորմելի անձնաւորութիւններ իր համոզման կը հպատակեցնէ: Վերջապէս ամէն միջոց ի գործ կը դնէ իր անձնական կամ պաշտպանածներուն շահերը ապահովելու համար. ի հարկէ այսպէս մէկուն օգուտէն աւելի վնասը լինելը ակնյայտնի է...

Ո՞Վ է յանցաւորը:
Փողոցներուն մէջ և ոչ մի տեղէ ակնկալութիւն ունեցող բազմաթիւներ ու պատարկաշրջիկներ, ինքզինքնին զարգացած անձնաւորութիւններ ձեւացնելով, իրենց օրական ապրուստը ճարելու համար՝ կեննեն ազգային մանկաւոյն դաստիարակութիւնը ձեռք կառնեն՝ դաստուի գիւմակի տակ. այս ինչ ազան շողորթութիւնով, այն ինչին դէմ չխօսելով և ամէնուն քրահարձքները կատարելով՝ որպէս զի իրենց պաշտօնին մէջ ամուր կենան:

Այս անարդարութեան դէմ բաւական բողոքներ կը ըլլան. բայց անոնց եւս մտիկ չընելով տղայական միջոցներով ինքզինքնին իր թէ կը պաշտպանեն. որպէսզի խաբեն ու ժամանակ անցնեն...

Ո՞Վ է յանցաւորը:
Անբարոյականութեան տիպին մէջ մխուած անձնաւորութիւններ քահանաներ կը ձեռնադրուին, ու ժողովուրդ մը հովուելու գիւմակի տակ կը շահագործեն ամէն ինչ որ սուրբ է. իրենք որ երկու խօսք ընելու անկարողութեան զատ, իրենց կարգացած և հասկանալու կարողութեան զուրկ են...

Ո՞Վ է յանցաւորը:
Անձնական ճշմարիտ հաշիւներու համար, զարգացումէ յետին ատիճանի զուրկ, կեղծ ազգասէրներ, ինքզինքնին ընտրելի կը ներկայանան ու է ազգային իշխանութեան պաշտօնատուն մէջ սպրդելու համար. սրովհետեւ այդ պաշտօնը իրենց համար մեծ գիրք մըն է ժողովրդեան առաջ. ոչ մի բանի օգտակար ըլլալէն զատ պատճառ կը դառնան ամբողջ սպառազ սերունդներ մեռցունել, ազգին մէջ երկպառակութիւններ ձգել ու իրենց այդ պաշտօնին մէջ ազգային շահի քոյի ներքեւ զանազան խեղճերու ստացուածքները կը կողոպտեն...

Ո՞Վ Է յանցաւորը...
Յանցաւորը՝ ժողովուրդն է:
ՄՈՒՐԱՏ-ՍՈՎՐԱՏ

Ս. Ջ. Գ.

Տեղւոյս Բնթւրցասիրաց Բնկիրութեան ներկայ անկերպարան վիճակին վերջ մը տալու համար որոշուած է յատկիկայ կիրակի 17 հոկտեմբերին ընդ. ժողով մը կազմել ազգային վարժարանի մէջ կէս օրէն յետոյ ժամը Յին: Այս ատիւ կը խնդրենք ամէն պարտաճանաչ հայ իրաւասարդներէ որ բարեհաճին ներկայ գտնուիլ յիշեալ ժողովոյն այսպիսի ազգօգուտ ձեռնարկի մը իրագործման նպաստելու համար:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

— Պարսից կառավարութիւնը Ղազվինի յայտնի դէպքի մասին հետեւեալ որոշումն է կայացուցեր. Ղազվին պարսիկ քաղաքի պարսիկ բնակիչներէն 18,000 թուաման տուգանք պահանջեր է, որոցմէ 7,000 ֆրանուած հայերուն պիտի վճարուի:

— Կեւոն Մոսրեան, Մոսկուացի հայ լեզուագէտը Մուշի բարբառի մասին Ֆրանսիոյն լեզուով հետազոտութիւն մը հրատարակած է, որը իբրեւ զեկուցում կարգացուած է արեւազէտների 11րդ միջազգային գօնկրէին մէջ:

— Սեպտեմբեր 25 էջմիածնայ մէջ կատարուել է Կեորգեան ձեռ-

մարանի գործընթացը 25ամեակը և 26ամեակը տեղեկացնող պատգամաւորներ եկած էին մասնակցելու այդ տօնախմբութեան, մասնակցողները մեծ մասամբ ճեմարանի նախկին սաները եղած են:

— Հոկտեմբեր 8ին Քաղաքի նահանգական դատարանի մէջ պիտի տեսնուէր նամակի հայոց հոգեւոր վարչութեան բացած դատը կողմանան պետական ուսումնական վարչութեան դէմ, որ գրաւած է եկեղեցական կալուածները:

— Մոսկուայի Լազարեան ճեմարանի նախկին տեսուչ, հանգուցեալ Գ. Քանանեանի յիշատակին հոգեհանգիստ կատարուել է Էջմիածնայ մէջ. հանգուցեալի այրին այդ առիթով 200 բուսիլի նուիրել է Մայր Աթոռի մատենադարանին և 200 բուսիլի ալ դաշխականներուն բաժնելու համար:

— Սեպ. 28 պատարագէն վերջ վե՛հ. կաթողիկոսը Էջմիածնի միաբանութեան, ճեմարանի սաներու և ստուար ժողովրդի ներկայութեան հոգեհանգիստ կատարել է Փէտրոս Գ. կաթողիկոսի գերեզմանի վրայ: Փերիզմանի վրայ կը դառնան եզեր երկու պատկ, մին ճեմարանի աշակերտներէն և միւսը Երեւանայ մէջ գտնուող նախկին սաներէն: Մովսրական դամբանականի փոխան, ու թը ուսանող ուսուցիչներ են հոգեւորական գառնայ և անմիջապէս սուրբ ընդունելու են:

Վերջը ամբողջ միաբանութիւնը և Վեհափառը դացեր են ճեմարանի բակը, ուր տեսուչը Կարապետ վարդապետ կարգացած է 25 ամեայ տեղեկագիրը, թեթեւ կերպով յիշելով երեք տեղամ պատահած աշակերտական խառնակութիւնները:

Երեկոյին զրական հանգէս տեղի ունեցե՛լ է, որուն հասարակութեան մասնակցութիւնը արդիւած են եղեր: Կը զարմանանք թէ ինչո՞ւ:

— Հոչակասոր բրոֆէսոր Վիրխով Պերլինի միջազգային գոնկրէի մէջ արտասանած է ճառ մը հայերու և Հայաստանի մասին, որմէ հետեւեալը կը քաղենք:

«Պէլքի և Լէմանի ուսումնասիրած երկիրը մեծ է. Հայաստանը մեզի ներկայիս իր անուսով շատ ծանօթ է. բայց շատ որոշ գաղափար կազմել այդ երկիրն վրայ դժուար է, մտնուանք որ լեզուն ալ չի նպաստեր անոր ուսումնասիրութեան գործին:

Հայերու լեզուն հնդկադերմանական կը համարուի, չընայած որ այդ երկիրը հնդկադերմանական ոչինչ կը յիշեցնէ: Անոնք շրջապատուած են սեմետական ցեղերով: Հայերը մեզի համակրելի են իրենց լաւ յատկութիւններով և իրենց դժբախտութիւններովը. շատ կարճատեւ եղած է

անոնց քաղաքական անկախութիւնը և երկրին ծաղկեալ վիճակը:

Հայերու դժբախտութեան միակ պատճառը չար գրաչիններն են, այլ և ճակատագրի բնական հարուածները, որոցմէ ամենամեծը երկրաշարժն էր որ աւերեց անոնց ամենահին մայրաքաղաքը և որ մինչև օրս գոյութիւն ունի: Չը նայած որ կը գանգատին թէ իրենց զաւակներուն կրթութիւնն աւել շատ դժուար է, այնուամենայնիւ ամէն ասպարէզներու վրայ շատ կրթուած և համակրելի հայերու կը հանդիպինք»:

Ն.Ա.Մ.Ա.ԿԱՏՈՒՓ

Նիւ-Եօրք, Փ. ճ. — Ապրիլ 23ին քառիվ փոսթով մը խնդրած էր որ անցեալ տարուան Քէօսթէնճէյէ հաւաքած բաժնեկիներուն վճարման մէկ ամիս ալ համբերենք. այսօր Տիւրք հինգ ամիս է որ կը սպասենք, եթէ չի շտապէք զրկել ձեր քով եղած պահանջներս, զիտցած ըլլաք որ յակնէ անուանէ պիտի հրատարակենք. ատոր համար ալ պատասխանատու չենք:

— Ռուսոյք, Մ. Թ. — Ղրկած էրամը ստացանք. և եթէ կարելի է, 169 թիւ «Նարժուսն»-ը եւ զրկեցէք սրովհետեւ մեր քով եղածները սպասած են:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հարաւային Ափրիկէի անգլիական բանակի հրամանատար, Պուլլէր Լոնտօնէն ճամբայ ինկած միջոցին յայտարարած է թէ՛ մինչև օր իր հրամանին տակ 75000 զօրք չըլլայ, լուրջ պատերազմական գործողութեան չը պիտի սկսի:

— Պոլսէն «Ֆր. Չայթունկ» լրագրին կը հաղորդեն հետեւեալը:

Անցեալ տարուան հոկտեմբերին քրտական զօրբաժինը, Թէյմուր փաշայի սպան, Քասիմի հրամանատարութեան տակ, յարձակեցաւ Հայաստանը հետադասող գիտնական Պէլքի վրայ: Վերջինս մահուանէ ազատեցաւ զայմաքովի տունը ապաստանելով. մտերմ Պէլք նորէն այդ աւազակաց տեղէն անցաւ և քիւրտերը կրկին փորձ ըրին անիկա սպաննել թուստորելով: Հէյտէրանցի քիւրտերու հրամանատար Հիւսէյին փաշա, որ Պէլքը սպաննելու գիտաւորութեան մէջ կը կասկածուէր, բանտարկութենէ ազատեցաւ 13000 մարք վճարելով Վանայ նահանգապետին: Քասիմը որ թեթեւ պատմոյ մը դատապարտուեցաւ, այժմ պաշտօնով Պարսկաստան կը գտնուի: Իսկ Վանէն կիմացուի որ այդ աւազակը իր տունը հանգիստ կընէ եղեր:

— Ռուսոյ մէջ հակաանգլիական շարժումները կը զօրեղանան. Ռուսական մամուլը կառավարութեան հրաւէր կը կարգայ ուսուցիչներու-Ֆրանսական ցոյց մը ընել Անգլիոյ դէմ: 400 Լամաւորներ կը պատրաստուին Բեթերսպուրկէն Թրանսվալ երթալ: Կամուարներ կելլան նաեւ ուրիշ քաղաքներէ:

Ռուս կառավարութիւնը ոչ մի արգելք կը դնէ այս ցոյցերուն դէմ: Թերթ մը կառաջարկէ Անգլիոյ դէմ նաւային ցոյց մը ընել հարաւային Ափրիկէի ափերուն քով, Ռուսական, Քերմանական և Ֆրանսական պատերազմական նաւախմբով, որուն հրամանատարութիւնը յանձնուած ըլլայ Ֆրանսայի:

— Լուրէնցօ. Մարքիլէն կը հեռագրեն թէ՛ Անգլիական Ռօթթրիքթ զրահաւորը հոկտեմբեր 6ի զրիշըը հանդիպելով Աւօնդալ կասի շոգեհաւին, Ինիաքս կղզիին քովերը, որ կուզար Տիւրքանէն, հրաման տուած է իր հակադեմամբ եւ դառնալ նաւահանգիստ: Եւ երբ շոգեհաւը նաւահանգիստ կը մտնէ, անգլիական թարթար զրահաւորը անորմէն կը խլէ 25.000 անգլիական ոսկի, որ պիտի հասնէր Թրանսվալի կառավարութեան:

— Հոկտեմբեր 9ին «Թան»-ին Լոնտօնայէն կը հեռագրեն թէ՛ Պօէրները այլեւս ազատ տարածութեան վրայ չը պիտի կուսին. ինքզինքնին լաւ պատրաստուած չեն զգար մեծ գործողութիւններու. մանուաւնք որ իրենց ուղմբաժիկներէն յոստիարուած են: Փէնէրալ Ժուպէր վստահ չէ զօրքին վրայ. կարի հօլլանտացիները կլէնքօյէի պատերազմին տաքտիքը խիստ կը քննադատեն:

— Առաջին կարեւոր ճակատամարտի մէջ, կլէնքօի քով, Թրանսվալցիները յաղթուել են Անգլիացիներէն: Անգլիական զօրքը կառաջնորդէր Մէնթալ Սիմօն, որ այդ յաղթութեան պատճառով աւելի բարձր աստիճանի արժանացեր է թագուհուն կողմէ:

Անգլիացիներու կողմէն 300 սպանուած կայ, իսկ Թրանսվալցիներունը 800

Լոնտօնայի մէջ այս յաղթութեան լուրը մեծ ուրախութեամբ ընդունուած է: Ամբօխը խոնամ պատերազմական նախարարութեան զիմաց գոհութեան ցոյցեր ըրած է և ամէն մէկ լուրը ծափահարած:

«Քրէտս տոսիաիօն» լրագրիւր կը կարծէ որ Անգլիան պատերազմէն վերջ, կարէն, Թրանսվալէն, նախալինէն, Ազան Օրանմէն և Բօթէլիայէն դաշնակցութիւն մը պիտի հիմնէ «Հարաւային Ափրիկէան» անունով:

—)(—

ԹՎՏՐՈՆ «ԱՆԿԼԷ ՍԼՈՒՊՅ»

Հոկ. 16 շաբաթ երեկոյ ժամը 8ին «Վեհալո» հայ դերասանական խմբի կողմէ պիտի ներկայացուի:

ՄՈՒՏ ՄԵՌԵՍԻԸ զուարճալի կատակախաղ 4 արար: Եւ խիստ ծիծաղաշարժ զաւէշտ մը:

Կիրակի երեկոյ՝ ԳԻՉՈՒՀԻՆ. արամ գօ.Ի.ք 4 արար և ծիծաղաշարժ զաւէշտ մը:

Գիտերը սովորական:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կր խնդրուի ամէն անոնցմէ որ անցեալ տարեշրջանին զգրոցի գրոց համար աւելցնին մնացած է՝ մեկ վճարեն. հակառակ պարագային պէտք եղածը պիտի կատարենք: Ա. Չարբանեղևան

Ե. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ

ՆՈՐ ԲՍՏՈՒՄ: ԵՆԱՎԱՃԱՍՌԱՆՈՅ Թիւ 389 Իսկիզի-պաշի

Կը վաճառուի ծրարստ. բոսթայի եւ աղբորոցի ամէն տեսակ բույր նաեւ «Շարժում»:

ԿՈՒՉԼՔ ՀՄՐՄՏԱՆԱԼ

Գիտեցէ՛ք Մ. Թիւթիւնեան եւ ընկ. Ի Ռուսուք

Որ ըստ ատման կը վաճառեն Սօֆիա քաղաքի Պուլիարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի ստասակները:

Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կընդունուին:

ԿԸ ՎԱՃԱՍՌՈՒԹԻՆ

Պուլիարական գործածուած ամէն տեսակ նաժարագործիներ եւ բաց նաժարներ:

Գիտե՛ք՝ Մուրուս Երսուսեան (Վանա)

ՊՕՐՍԱ

Վառնա 15 Հոկտեմբեր			
Վախօն	Լիպրա	Ֆրանք	
ՊՈՒՂՏԱՅ	53—57	9 20—10	
ՄԻՍԻՐ	—	—	Եօզ
ԱՐԲԱ	—	—	»
ԵՌԻՎԱՅ	—	—	»
ՅԱՍՈՒԼԵԱ	—	—	»
ՏԱՐԸ	—	—	»

Սոսպա	Լիպրա	Ֆրանք	
ՊՈՒՂՏԱՅ	55—60	10—11 60	
ԱՐԲԱ	38—44	7.20—8	
ԵՌԻՎԱՅ	35—36	5.20—5.30	
ՄԻՍԻՐ	55—57	6—7	
ՏԱՐԸ	55—58	5.50—60	
ՅԱՍՈՒԼԵԱ	100 Վրո	12—20	

Հէր կիւն կլէն մալ		
ՊՈՒՂՏԱՅ	150—200	սոսպա
ԱՐԲԱ	25—30	»
ԵՌԻՎԱՅ	5—10	»
ՅԱՍՈՒԼԵԱ	15—20	»
ՄԻՍԻՐ	10—15	»
ՏԱՐԸ	8—10	»

Սոսպա մուամէլլախի նարուէն 21.20 ֆրանք հիսապը իւէ սիր: